

ՍԿԵՏԼԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՏՔՆ ՈՒ ԿՆՈՋ  
ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ  
19-ՐԴ ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ.

19-րդ դարի 70-80-ական թվականներին ժամանակաշրջանին բնորոշ էին հասարակական – տնտեսական, մշակութային, ազգային կյանքի ներքին տեղաշարժերը: Եվ ազգային զարթոնքի գաղափարախոսները, բնականաբար, չէին կարող շրջանցել ժամանակի հրատապ խնդիրներից մեկը՝ կնոջ ազատագրության հարցը, որն, իրականում, սերտորեն աղերսվում էր երկրի դեմոկրատական վերակառուցումների հետ: Այլ կերպ ասած, առաջընթացի ուղին հարթելու համար ազգը ազատագրական կոիվ ուներ տալու ոչ միայն «էն դիհում», այլ նաև՝ կռիվ «ներսի» հետադիմական ուժերի դեմ:

Ազգային նորոգության նախանձախնդիր այրերը ճիշտ շեշտադրեցին՝ ազգային ոգու վերածնությունն անմիջական կապ ունի հասարակության բոլոր անդամների, այդ թվում նաև՝ կնոջ ազատագրության հետ: Հասարակությունը ազատ չի կարող լինել, եթե նրա զգալի մասը՝ կանանց սեռը, ստրկության մեջ է: Հ.Առաքելյանը Ցյուրիխից «Մշակին» ուղարկած իր թղթակցության մեջ խնդիրը հստակորեն է ձևակերպում՝ դարի առաջադիմությունը պահանջում է, որ «... մարդկության կեսը՝ կանայք տգիտության շղթաներից ազատվեն և զարգանալով մտավոր և գործնական մշակների թիվը բազմապատկեն»<sup>1</sup>: Այնինչ նահապետական կենցաղն այդ հնարավորությունն իրականում բացառում էր:

Հայտնի չափանիշ է՝ ազգի քաղաքակրթության աստիճանը որոշվում է նաև այն դիրքով, որ գրավում է կինն այդ հասարակության մեջ: Անշուշտ հենց սա նկատի ուներ Արշակ Չոպանյանը, երբ գրում էր, որ «հարգանքն ու ազատությունը, զոր կինը կվայելեր ընկերության մը մեջ, գլխավոր սատարներեն մին է, - եթե ոչ գլխավորը, ընկերության մտավոր ու բարոյական

<sup>1</sup> «Մշակ» 1872թ., №29:

զարգացումին. թուրքը հարեմի ցոփ ու անասնական կյանքին մեջ ապուշանալով, բռնադատելով կինը ստրկական արգելափակման ու բացարձակ տգիտության, կասեցուց իր դեպի նոր քաղաքակրթությունը հառաջխաղաց բնաշրջության հնարավորությունը»<sup>1</sup>: Այլ կերպ ասած, ըստ մեծ մտածողի, կնոջ ազատությունը հասարակական առաջընթացը սատարող գործոն է: Սակայն 19-րդ դարի 70-80-ական թվականներին սանձարձակ էր բռնատիրությունն ինչպես Թուրքիայի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, նույնպես նաև՝ ընտանիքում:

Կինը մուսուլմանական աշխարհում, այդ թվում նաև Թուրքիայում, դիտվում էր որպես մարդ արտադրող միջոց և տղամարդու սեփականություն՝ բոլոր առումներով: Պատմում են, որ Թուրքիայի արտաքին գործոց նախարար Ֆուատ Փաշան ցույց տալով հարեմի պատը ասել է՝ «ահ'ն Տաճկաստանի հառաջադիմության թշնամին, որքան ատեն որ այս պատը գոյություն ունենա, մենք բան մը ընելու կարող պիտի չըլլանք»<sup>2</sup>: Անշուշտ, հարեմի համեմատությամբ շահեկան էր կնոջ վիճակը հայ ընտանիքում: Գնահատման չափանիշները էականորեն տարբեր էին: Ժամանակի հայ հասարակական կյանքը կաշկանդող ավատատիրական կապանքները շարունակում էին ծանր մնալ հայ կնոջ համար: Դրանք դարերի ընթացքում սովորույթի ուժից վեր էին ածվել օրինականության և այդ պատճենը դժվար էր խորտակել:

Բայց, իրական էր նաև այն, որ անկախ իրեն պարտադրված կրավորական վիճակից, մեր պատմամշակութային կյանքում որոշակի դեր ու նշանակություն է ունեցել հայ կինը: Պատմական զարգացման բոլոր փուլերում, ընտանիքի հոգսերից զատ, նա զբաղվել է նաև իրեն հոգեհարազատ գործերով՝ գորգագործությամբ, ասեղնագործությամբ, խեցեգործությամբ և այլն:

Հայ կնոջ առաքինությունները բարձր գնահատելով հանդերձ, ժամանակի առաջավոր դեմոկրատական միտքն աշխատում էր նոր հայացքներով գնահատել հայկականությունը, այն դուրս բերել ներփակությունից: Գիտության, լուսավորության, կանանց առաջադեմ շարժման եվրոպական փորձը նրանք չէին դիտում որպես սոսկ մեխանիկական յուրացում, այլ այն ընկալում էին որպես ինքնաբացահայտման, ազգային արժեքների՝ դարի ոգուն համապատասխան, վերաարժեվորման չափանիշ: Մինչդեռ, եկեղեցին քարոզում էր

<sup>1</sup> Ա.Չոպանյան, «Սկրտիչ Պեշիկթաշյան. կյանքը և գործը», Փարիզ 1907թ. էջ 10:

<sup>2</sup> Ա.Չոպանյան, «Սկրտիչ Պեշիկթաշյան. կյանքը և գործը», Փարիզ 1907թ. էջ 11:

կնոջը հնազանդ ու խոնարհ լինել, բոլոր հարցերում ապավինել ամուսնուն և Աստծուն: Եկեղեցում, ամուսնական արարողության ժամանակ, քահանան պատվիրում էր փեսային «տեր լինել» իսկ հարսին «հնազանդ լինել»: Այսպիսով, փաստորեն, եկեղեցին օրինականացնում էր ամուսին «տիրոջ» և կին «հպատակի» կարգավիճակն ընտանիքում:

Սա դարերի ընթացքում որոշակի կնիք էր դրել կենցաղի, ազգային հոգեբանության վրա, կաղապարվել ավանդակեցությամբ, արձատավորվել իրավունքի և պարտականության հասարակական պատկերացումներում: Բայց միայն աստվածաշնչյան առասպելին վերագրել կնոջ ստորադաս վիճակի միակ բացատրությունն, անշուշտ, գիտական չէ: Ֆեոդալական միջնադարը, և հատկապես հողի սեփականության ավատատիրական սկզբունքը զրկեց թույլ սեռին ժառանգության իրավունքից և սկզբնավորեց նրա հասարակական դիրքի բացարձակ անկումը, այսինքն՝ հիմքը ֆեոդալական հասարակական հարաբերություններն էին, որից դուրս էր մղված կինը: Հարաբերություն հասկացողությունը կողմերի միջև ենթադրում է նաև իրավունք, իսկ կինը զրկված էր որևէ իրավունքից, ուստի՝ հասարակական հարաբերությունները շրջանցում էին նրան: Հասարակությունը, փաստորեն, օտարել էր կնոջը: Հայ դեմոկրատ հասարակական մտածողները խնդիրները ձևակերպելիս «ի՛նչու» հարցադրումն արդեն փոխարինում էին «ինչպե՞ս»-ով և աշխատում էին լուծումներ առաջադրել: Նրանք փորձում էին բացատրել, թե ե՞րբ և ինչպե՞ս ծագեց կնոջ բացարձակ իրավագուրկ վիճակն ընտանիքում և հասարակության մեջ: Գր. Արժրունին, Բաֆֆին իրավացիորեն գտնում էին, որ նահապետական ընտանիքը որպես անհրաժեշտություն առաջ եկավ հասարակական զարգացման որոշակի փուլում: Ընտանիքում գլխավոր դերը պատկանում էր աշխատող ձեռքին և ֆիզիկական ուժին: Լինելով ֆիզիկապես թույլ էակ, կինը, աստիճանաբար կորցրեց իր դիրքը և մղվեց ետին պլան: Ընտանիքի միավորված լինելը թելադրված էր, ամենից առաջ, սոցիալական դրդապատճառներով: Բայց, ըստ նրանց, պակաս կարևոր չէր նաև արտաքին վտանգին դիմակայելու անհրաժեշտությունը: Բաֆֆին գտնում էր, որ հսկայական գերդաստանի ներդաշնակությունը չխախտելու, երկպառակությունները կանխելու համար էր նաև, որ կնոջը ստիպեցին լռել, հնազանդ լինել և կամք չարտահայտել:<sup>1</sup>

<sup>1</sup> Տես «Աշակ» 1879թ., №35:

Հայ առաջավոր միտքը կնոջ փրկությունը, որպես շահագործվող սեռի, տեսավ ոչ թե կրոնի և ապաշխարանքի մեջ, այլ շեշտադրեց հարցի լուծման սոցիալական միջոցը: Նա պաշտպանեց այն ճշմարիտ դրույթը, որ առհասարակ ազատ լինելու համար կանայք ամենից առաջ պետք է ձգտեն տնտեսական անկախության: Նման լուծումը կնոջը հնարավորություն կտար ավելի անկախ լինել մյուս սեռի կամայական բարեհաճությունից: Հասարակական – քաղաքական որոշակի պայմաններում դա կնոջը ստրկական վիճակից դուրս բերելու իրատեսական միակ հնարավոր ելքն էր: Վարձատրվող հանրային աշխատանքը միայն կարող է «բարձրացնել կնոջ վիճակը և նրան հավասար աստիճանի վրա դնել տղամարդի հետ: Երբ կինը ազատ պարապմունք ունի, երբ նա էլ իր կողմից օգնում է ընտանիքին, այսպիսով նա կախում չի ունենա տղամարդից և կզցե իր վզից նրա բռնակալության կոպիտ լուծը: Տղամարդն էլ իր կողմից կունենա դեպի նա, բացի սերից, մի առանձին պատիվ, երբ կզտնի նրա մեջ մի լավ աշխատակից», - գրում է Բաֆֆին<sup>1</sup>: Աշխատանքը կբարձրացնի կնոջ վարկը ոչ միայն հասարակության մեջ այլ նաև՝ ընտանիքում: Նույն տեսակետին էին նաև Գր. Արժրունին, Գր.Նիկողոսյանը, Ա.Թոխմախյանը, Ա.Արփիարյանը, Գ.Սունդուկյանը և շատ ուրիշներ:

Ժամանակի մամուլի էջերում ու գրականության մեջ լքողորեն և համակողմանիորեն քննարկվում էին այս հարցերը: Որպես չափանիշ էր ընդունվում ամերիկյան և եվրոպական կենսափորձը, այնքան որքան ամեն ազգի առաջադիմական յուրաքանչյուր նվաճում, վերջին հաշվով, համամարդկային արժեք է: Մարդու, այդ թվում նաև կնոջ, ազատությունը լուսավոր դարաշրջանին բնորոշ երևույթ էր: «XIX դարի ազատության դրոշակի տակ կանայք էլ փոքր առ փոքր դուրս են գալիս իրենց դարավոր ստրկությունից - գրում է «Մշակի» խմբագիրը: - Հաստատ կամքով, անսպառ եռանդով, անխնոջ աշխատանքով նրանք, կարելի է ասել, հաղթեցին դարավոր մախապաշարումները: Այժմ և կանայք եվրոպայում հասկացել են ընկերության բարձր նշանակությունը, մախապաշարմունքների դեմ պատերազմելու արգելքները հաղթելու ու գործը առաջ տանելու համար հարկավոր է միություն, իսկ առանձնացած, ցրված ուժերով ավելի դժվար է արգելքների դեմ գնալ, մանավանդ կնոջ համար: Ռիթեմ կանանց համար հարկավոր է միացած, ձեռք

<sup>1</sup> «Մշակ» 1879թ., №35:

ծեռքի տված աշխատել, միմյանց բարոյապես և նյութապես օգնել և պաշտպանել» - եզրակացնում է թերթը<sup>1</sup> :

Շողովրդի բնականոն զարգացումը պետք է հանգեցնի համընդհանուր արդարության ձգտող հասարակության: Անարդարացի և չիմնավորված է կնոջ կրավորական վիճակը, որը շատ հաճախ նրան հասցնում էր հուսահատության և ողբերգության:

Լործունին, որը նույնպես կնոջ սոցիալական վիճակի բարելավման ելքը տեսնում էր հասարակական աշխատանքի մեջ, գրում էր որ արդեն նկատելի են առաջին ծիլերը՝ «Տասը տարուց ավել չէ, որ հայ կինը փակված, ստրկացած ընտանեկան կյանքից դուրս եկավ և սկսեց փոքր առ փոքր մասնակցել մեր հասարակական կյանքին. նա դարձավ վարժուհի, սկսեց հետաքրքրվել մեր լրագրական գործով, սկսեց մասնակցել հայոց թատերական ներկայացումներին, գործել մեր լրագրության մեջ, սկսեց իր թույլ աշխատանքներով հարստացնել մեր գրականությունը»<sup>2</sup>: Եվ ուրախալին այն էր, որ արդեն իրենց ստրկական վիճակի դեմ ըմբոստանում էին նաև կանայք ու հանդես էին գալիս հրապարակային ելույթներով: «Մշակի» թղթակիցներից մեկը գրում էր, որ ոչ մի տեղ կինն այնքան անպաշտպան չէ, որքան իր ընտանիքում: Եվ հենց ընտանիքն առաջինն է կոփում կնոջ շղթաները:

Դառը և փխուր պատկեր է ներկայացնում «Մշակի» թղթակցուհին: Ընտանիքը «մեռցրել է մեր անձնավորությունը, - գրում է նա - ճնշել է մեր անհատական զարգացումը և հլու ու կրավորական էակներ ստեղծել մեզանից: Մենք ապրել ենք ուրիշի ճաշակով, սիրել ենք ուրիշների հրամանով, ծիծաղել ենք բռնավորական մտրակի սպառնալիքով, մտածել ու խոսել ենք ոչ մեր համոզմունքով, այլ ինչ թելադրել է մեզ համգամամքը - մի խոսքով՝ մենք ստրուկ ենք եղել և միահավասար հարստահարված ենք եղել թե՛ ֆիզիկական և թե՛ բարոյական և մտավոր կողմերից»<sup>3</sup>: Սա վկայությունն էր այն բանի, որ հայ կինն արդեն արթնացել է մտավոր միրհից, գիտակցում է իր վիճակի ողբերգությունը և պատրաստ է պաշտպանել իր ոտնահարված շահերը: Բայց կյանքի անտանելի պայմաններն ու հուսահատությունը շատերին ստիպում էին դիմել բողոքի և պայքարի պասիվ ձևին՝ ինքնասպանությանը: Քարվանսարայից

<sup>1</sup> «Մշակ» 1878, №160:

<sup>2</sup> «Մշակ» 1877, №29:

<sup>3</sup> «Մշակ» 1877, №71

«Մշակին» դառնությամբ գրում էին՝ «Տարի չի անցնում, որ մեր գյուղերում կանանցից ջուրն ընկնող չլինի, կամ պատահում է, որ թոկով խեղդվում են, կախվում են. գյուղացի կանանցից շատերը լավ են համարում մեռնել, քան թե ապրել և իրենց մարդու բարբարոսական վարմունքին ենթարկվել»<sup>1</sup>:

Միանգամից խորտակել դարերով ամրապնդված սովորույթները անհնարին էր: Բաֆֆին հանգամանորեն և իրատեսորեն նկարագրել է նահապետական ընտանիքի խիստ բարքերը, կնոջ կրած անլուր տառապանքները: Նա անբնական համարեց այնպիսի կենցաղը, երբ ընտանիքի խիստ պայմաններն աղջկան «երկաթի վանդակի» մեջ էին պահում, իսկ կնոջն արգելված էր խոսելն անգամ: Եվ մեծագույն ողբերգությունն էլ հենց այն էր, որ աղջիկը դեռ վաղ հասակից հաշտվում էր իր վիճակի հետ: «Նա մանկությունից հասկանում էր, թե ինքն իրավունք չունի պահանջել, որ իր հետ մեղմ լինեն, քաղցրությամբ վարվեն, որովհետև նա աղջիկ է»<sup>2</sup>: Տանը նա ավելորդ քեռ էր: Իսկ «... ամուսին այրը, - շարունակում է վիպասանը, - չէ կարող պաշտպան հանդիսանալ կնոջ տանջանքները թեթևացնելու համար: Եվ մի՞թե նա կարող է հասկանալ, թե նրա կրածները տանջանք է»<sup>3</sup>:

Ժամանակի քննարկման հարցերից էին ոչ միայն ընտանիքի այլ նաև դաստիարակության խնդիրները: Ազգային խնդիրների նորօրյա պահանջների թելադրանքով առանձին ուշադրություն էր դարձվում կանանց կրթությանն ու լուսավորությանը: Հայ դեմոկրատական միտքը տեսականորեն հիմնավորում էր կնոջ մեծ խորհուրդը երեխաների դաստիարակության գործում: Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսները չափազանց կարևորելով երեխայի ընտանեկան դաստիարակությունը դրան տալիս էին նաև հեռահար ռազմավարական նշանակություն: Եվ այստեղ անզնահատելի դեր էր վերապահվում կնոջը: Նա է, որ նորածին երեխայի մեջ պիտի սերմանի ազատության, հայրենիքի և հայրենասիրության գաղափարը:

1878թ. «Հայկական հարցի» արծարծման հետ կապված հուսադրումների և ոգևորությունների մասին «Մշակին» երգումից ուղարկած Գր. Նիկողոսյանի թղթակցության մեջ կարդում ենք. որ տեղում հայկական իշխանության վերականգման ոգևորությունն այնքան մեծ էր, որ անգամ կանայք ու աղ-

<sup>1</sup> «Մշակ» 1877, №33:

<sup>2</sup> «Մշակ» 1879, №35:

<sup>3</sup> «Մշակ» 1879, №39:

ջիկներն էին պատրաստ զենքը ձեռքին այն պաշտպանելու. «Սենք մինակ արտասուքով կապրինք, - ասում էին էրզրումի օրիորդները, - այո արտասուքով... Քակեցեք մեր գերությունը, բացեք մեր ձեռքերը, տեր ըրեք մեր երկրին... տեսնենք այն ժամանակ, ո՞ր աղջիկ ծի չի հեծնիր, սուր չի առներ և իր եղբոր հետ չերթար պաշտպանելու իր հայրենիքը... այն ո՞ր աղջիկը իր քաղաքի պայծառության համար քար ու կիր չի կրեր. մեր ուսերը սովոր են արդեն: Եթե մեր ձեռքերը հերիք չեն լինիր, մեր գլխին ոսկին կը ծախենք, մշակներ կը վարծենք և մեր երկիրը նորեն կը շենացնենք...»<sup>1</sup>: Հայրենամվեր այս մղումը ամենուրեք էր:

Հայրենասիրական դաստիարակության գործում մեծ տեղ հատկացնելով կնոջը, միաժամանակ ուշադրություն էր դարձվում այն բանին, որ դաստիարակողն ամենից առաջ ինքը պետք է դաստիարակված լիներ, նրան հասու պետք է լինեին ժամանակի լուսավոր և ազատամիտ գաղափարները: Կնշանակի պայքարի սուր ծայրը պետք է ուղղվեր այն նախապաշարումների դեմ, որոնք կաշկանդում էին կանանց դաստիարակությունն ու կրթությունը, նրանց հայրենամվեր ու հասարակական գործունեությունը: Ջմյունհայի «Արևելյան մամուլը», որը կնոջ ազատագրության ամենակտիվ ջատագովներից էր, չափազանց կարևորում էր մարդու, այդ թվում նաև՝ կնոջ բարոյական հատկանիշների կատարելագործումն ու հասարակական գոյության չափանիշների զարգացումը: Պատմությունն, փորձն և ներկա իրողություններ կջնջեն այդ հնամենի վճիռն, կնկան ճակտեն գերության աղտը կսրբեն և ցույց կտան որ կինն ինչպես ընտանեկան, գրական և քաղաքական ասպարեզին մեջ կարող պիտի լինի մարդուն հետ մրցիլ, եթե միայն իր բնական և ստացական կարողությունները հետզհետե մշակելու պայմաններուն մեջ դրվի...»<sup>2</sup>: Այս գաղափարները գեղարվեստորեն մարմնավորվեցին հատկապես «Խենթը», «Կայծեր», «Խաչագողի հիշատակարան», «Էլի մեկ զոհ» և այլ գեղարվեստական գործերում, որոնց տպագրվելուց հետո «Սեղու Հայաստանին» լցվեց հերթական վայրախոսություններով: Կղերամիտ Հայկունի<sup>3</sup> ազատականներին մեղադրեց նահապետական հայ ընտանիքի ավանդական բարքերը ոտնահարելու մեջ: «Ամեն մարդ էլ դատավոր, խրատող և քննիչ է դարձել... ընտանիք և ընտանեկան հարաբերությունը, գիտությունը և սրբությունը... և ամեն բան,

<sup>1</sup> «Մշակ» 1878, №120:

<sup>2</sup> «Արևելյան մամուլ», 1883, հուլիս, էջ 339:

<sup>3</sup> Հայկունի – ժամանակի հասարակական գործիչ, գրող, հրապարակախոս Եղիշ Գեղամյանի ծածկանունն է:

ուտքից ցզուխ քննվում, խորտակվում և ջանջախվում է»<sup>1</sup>: Ազգային պահպանողականները, որոնք ազգային հարցերում մեծ նշանակություն էին տալիս բարոյական գործոնին, ազգի գոյության ամենավճռական դերը վերապահում էին եկեղեցուն: Նրանք դեմ չէին նորոգության, բայց այդ նորոգությունները պետք է արվեին աստիճանաբար, առանց ազգի հիմքերի քայքայման, առանց ազգի ավանդական կառույցի կործանման, առանց եկեղեցու հեղինակության անկման: Ընտանիքը ազգի ավանդական և բարոյական »սեփականությունն« է, ըստ պահպանողականների: Հայ ավանդապահ ընտանիքը, որն ազգային նկարագրի հենասյուններից է, ամձեռնմխելի պետք է լինի եկեղեցու կողմից սրբազործված իր օրենքներով: Նրանց տեսակետով փոփոխել ընտանիքը՝ կնշանակի խախտել ազգի ինքնության հիմքը:

Սակայն պատմության ընթացքը կախում չունի մարդկանց սուբյեկտիվ կամքից: 19-րդ դարի երկրորդ կեսին Անդրկովկասն արդեն Ռուսաստանին զուգահեռ ներառվում էր կապիտալիստական արտադրահարաբերությունների մեջ: Աստիճանաբար փոխվում էին քաղաքի ու գյուղի բարքերը: Բուրժուականացող հասարակությունը որոշակի վերափոխում էր նաև ընտանիքն ու ընտանեկան հարաբերությունները: Սա անցման շրջան էր, երբ սկսվել էին խարխուլվել հին կապանքներն ու հին հարաբերությունները և ձևավորվում էին նորերը: Փոխվում էին կեցության հին ձևերը: Եվ չնայած դեռ շարունակում էր հիմնականում տիրապետող մնալ նահապետական ընտանիքը, բայց համեմատաբար ազատ էին դառնում բարքերը, հատկապես՝ արդյունաբերական կենտրոններում: Այստեղ արդեն որոշ չափով փոխվում էր կնոջ դերը: Ամուսինը նաև տնտեսական շահերով էր կապվում կնոջ հետ և նրան վերաբերվում որպես մտերիմ մարդու: Ընտանիքում կնոջ այս նոր վիճակը փոխում էր նաև նրա հասարակական դիրքը: Սա, իհարկե, հասարակության աշխատավորական խավերում: Բայց նորաթուխ բուրժուական ընտանիքներում և կենցաղում տիրապետում էր քաղքենությունը: Հայ առաջավոր միտքը ուշադրություն էր հրավիրում այն բանին, որ բարձր դասի մեջ կինը սկսել է օտարանալ, չի խոսում մայրենի լեզվով, խորշում է ազգային ավանդույթներից: Այստեղ »օտարացումը գտնվում է իր տգետ այլանդակության մեջ, - գրում է Րաֆֆին, - ընտանիքը խլվելով մայրենի բնական հողից, դեռևս հաստատ հիմք չէ ձգել օտար հողի վրա: Նա տատանվում է որպես մի ծառ, որ արմատ չունի»<sup>2</sup>: Մեծ վիպասանի մտահոգությունը լուրջ հիմքեր ուներ: 70-80-ական թվականներին

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի» 1883, № 106:

<sup>2</sup> «Մշակ» 1882թ., № 42:



մեծ դժվարությամբ հաղթահարելով հասարակական կապանքներն ու խռչնդոտները, հայ կինը զարգացման բնական մղումով զգալի առաջընթաց կատարեց: Նա հասավ Փարիզ, Ցյուրիխ, Լեյպցիգ, Ժնև՝ բարձրագույն կրթություն ստանալու: Մեծագույն առավելությունների կողքին, եվրոպական կրթությունն ուներ նաև վտանգավոր կողմ: Դա օտարամտությունն էր: Որքան վտանգավոր էր ազգային սահմանափակությունը, նույնքան չարիք էր նաև եվրոպամտությունը: Նկատելի էր արդեն մայրենի լեզվի, մշակույթի, ավանդույթների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը: Ո՞րն էր ելքը: Խնդիրը կարևոր էր և լուծում էր պահանջում. եվրոպական կրթություն, լուսավորություն՝ ազգային փոխաձևությամբ: Այս էր առաջադրվում որպես խնդրի լուծման ելք: Այս ուղղությամբ մեծ ջանքեր էր պահանջվում ոչ միայն տեսական, այլ նաև գործնական դաշտում: Օտարամտությունը քննադատվում էր մամուլում, գրական գործերում, թատերական ներկայացումներում: Խնդիրը չէր կարող վրիպել Չ.Պարոնյանի սուր աչքից: Մեծ է հատկապես Մկրտիչ Պեշիկթաշյանի դերը, որը ոչ միայն հայրենամիլեր պոեզիայով, այլ նաև մանկավարժական գործունեությամբ շատ հայ երիտասարդների և օրիորդների դարձի բերեց օտարացումից: Թարգմանչած, լուսավորչյան և Հռիփսիմյանց վարժարաններում աշխատելուց զատ, նա մասնավոր դասեր էր տալիս նաև հայ ունևոր ընտանիքներում:

Մեծ էր նաև քաղքենի կենցաղի սունդուկյանական քննադատության հասարակական հնչեղությունը:

Բուրժուականացող հասարակությունը հասարակական ինստիտուտներ էր առաջադրում և, փաստորեն, տեսական հասարակական – քաղաքական հայացքներին փորձում գործնական կիրառում տալ: Առաջադրվող կարևորագույն խնդիրներից էր նաև քաղաքացիական ամուսնության և ապահարզանի հարցը: Խնդիրը լայն արձագանք գտավ՝ ընդգրկելով հասարակական բազմապիսի խավեր: Կնոջ ազատության ամենակարևոր իրավական կողմը ապահարզանն է: Ազգային պահպանողականներն ապահարզանի իրավունքը համարեցին անբարոյականություն: Այդ սկզբունքը պաշտպանալելով Մարկոս Աղաբեկյանը Ազգային ժողովի ամբիոնից հայտարարում էր, թե «եվրոպան ուրիշ կերպ ըմբռներ է եղել ամուսնական խնդրին, առի մեղ փույթ չէ. Մենք Ասիական ազգ ենք և պետք է փույթ տանինք, որ համաձայն մեր եկեղեցվո օրինաց՝ ամուսնական զեղծումներն հետզհետե նվազին»<sup>1</sup>: Հակադրվելով պահպանողականներին, այլ տեսակետ էր հայտնում Գր. Արծրունին. «Ապահարզանը

<sup>1</sup> Ատենագրություն Ազգային ժողովո, 1885-87, հ.5 էջ 166:

անհրաժեշտ է մեր կյանքում, անհրաժեշտ է գլխավորապես Հայուհուն, որ իր ամբողջ էությանը, եթե կարելի է այսպես ասել, ապստամբվում է ապօրինության դեմ և որը իր բնավորությանը, որպես բարոյականության տիպար՝ կարծես ստեղծվում է միայն օրինականության համար»<sup>1</sup>: Նա անվերապահորեն կողմ էր ապահարգանհին, որը ոչ թե անբարոյականություն էր, այլ հակառակը՝ անբարոյականությունը բացառող միակ միջոց: Քաղաքացիական ամուսնությունների, ապահարգանհի, կնոջ սոցիալական իրավունքների ճանաչման գաղափարախոսությանը գրական տեսք տվեց վիպասան Սրբուհի Տյուսաբը, և, որ շատ կարևոր է, ժամանակին ունեցավ իր հետևորդները: 1883թ. հրատարակվեց նրա հանրահայտ «Մատյա» վեպը, որը նոր ու թարմ գաղափարներով ու համարձակ եզրահանգումներով ցնցեց հասարակական միտքը և հետաքրքրեց հասարակության համարյա բոլոր խավերին: Գրքի առաջաբանում հեղինակը գրում է «...կինն ընկերության ողորմելի զոհն է»<sup>2</sup> և որ ստրկական վիճակում չի կարող ճշմարտություն և զարգացում լինել: Մեծ տպաքանակով հրատարակված այս վեպը շատ արագ սպառվեց և ռումբի պայթյունի ազդեցություն թողեց: Գրքում արտահայտված տեսակետների շուրջը սուր բանավեճեր ծավալվեցին: Տյուսաբը պահանջում էր ամուսնության և ապահարգանհի մենաշնորհը վերցնել եկեղեցուց: Սա չափազանց համարձակ տեսակետ էր, և նա հրաշալի էր գիտակցում, որ իր պաշտպանած գաղափարների համար անպայման պիտի հալածվի հետադիմականների և եկեղեցու կողմից: «Սթի մեջ աղոթող» ժողովրդի լուսավորությանն էր ուղղված նաև մեկ այլ տաղանդավոր հայուհու ջանքերը: «Ես որոշակի կզգայի, որ գրականությունը զարդ մը, պերճանք մը չէ..., - իր հուշերում գրում է Ջապել Եսայանը, - այլ գորավոր միջոց մը, որուն կուզեի տիրանալ պայքարելու համար այն բոլոր բաներու դեմ, որ կը համարեի անարդար»<sup>3</sup>: Սիպիլի /Ջապել Ասատուրի/ հրաշալի գրական վաստակի և հատկապես դրա ունեցած հասարակական հսկայական դերի մասին Գրիգոր Զոհրապը պիտի գրեր՝ «Այն երիտասարդ կինը, որ Սիպիլ կը ստորագրե, իր անհատական կյանքովը պարծանքն է իր սեռին և մեծ տաղանդովը՝ մեր բոլոր գրականությանը»<sup>4</sup>:

Իրոք որ ժողովրդի բարոյական և մտավոր վերանորոգությունը կարելի է հաջողված համարել, եթե դրան ակտիվ մասնակցում է կինը: Եվ դա ճշմարտություն է պատմական զարգացման բոլոր փուլերի համար:

<sup>1</sup> «Մշակ» 1890թ., №39:

<sup>2</sup> Սրբ.Տյուսաբ, «Մատյա» Կ.Պոլիս, 1883, էջ 2:

<sup>3</sup> ԳԱԹ, Ջապել Եսայանի ֆոնդ, ց.6 ք.370-371:

<sup>4</sup> Գր.Զոհրապ «Ծանոթ դեմքեր և պատկերներ», Փարիզ, 1932թ., էջ 45: